

Նողողում էր նման ինչ արեգական,
Ելնքին ու պոչին մին թէփուլ չունէր:

Այսին շատ սուր էր, ըսկի չունէր լուս.
Կառցին հինգ օազ էր, գեղ ելր եկի դուս.
Զէն զուռնայ սազ էր, բերին չունէր սուզ,
Կատարն շատ ձիք էր, զլինին խուլ չունէր:

Երկրորդ՝ «Գետախօշն ման ի դալիս»
ոտանաւորով պատկերացնում է գետափում
տեսած «այլակերպ» զազին.

Կառցին նիզի նման էր,
Ճանկերն ըրգի նման էր.
Կոթալն սազի նման էր,
Զէն զուռնայ սազ էր տեսայ:

Իսկ երրորդը «Մին մարդ ինձի ասաց»
մի փոքրիկ արամախօսութիւն է, որի մէջ
երկու մարդիկ փոխադարձ երգիծելով իրար
վիրաւորում են:

6. ԱՅԼԱԲԱՆԱԿԱՆ: Միւս աշուղ-երգիշ-
ների՝ Յարթին օղլու, Ամիր օղլու, Ղուլ
Յովհաննէսի՝ նման, Տէր-կարապետը և
հիւսել է այլարանական մի երգ «Եղին ու
ձին» խորագրով: Եղն ու ձին գոմում
կանգնած վիճում են և միմեանց պար-
սաւում: Այդուեղ թէկ խօսում է եզան ու
ձիան մասին, բայց պէտք է հասկանալ
ոչ թէ իր բուն, բառական մորգով, այլ
այլարանօրէն: Եզը-հողագորկ շինականն
է, որ տուաւորից մինչև երեկոյ աշխատում
է, տքնում, չարչարում, վարում, ցանում,
սակայն զարձեալ չի կարողանում իր չա-
րտանջ վաստակի արդինքը վայեկէլ,
իսկ ձին-կալւածատէլ բոնակալ խանն է,
որը թէկ չի աշխատում, չի արտազրում,
բայց հանգիստ կիսանք է վարում: Տեսէց
նա (ձին) ինչպիսի զոռողութեամբ և ամ-
րաբաւանութեամբ է դրւասում իրեն.

1. Յարթին օղլու և Ամիր օղլու երգերը հաստառա-
կել ենք առանձին զբայշներով, իսկ Ղուլ Յովհաննէսի
մասին մի յօդած ուղարկել ենք Փարեզում հրատա-
րակուոց «Յշական» թերթին: Ա. Ե.

Զին ասաց. մնենքն ինձ շատ են սիրում,
Ապրէշում շոքերով ինձի զարդարում.
Ոսկի, արծաթ, ակներ, իմ զգին շարում,
Թիմարելուս համար թրմայշալ ունեմ:

Խեղճ գեղջուկը պատասխանում է.

Եզն ասաւ. Էր անբան, փուչ է զարդարքն,
թէ ես գատում չանիմ, ուստի փոյ վարքն.

Աշխարհն բանել է իմ աշխատանին,
Վարում եմ, աշխատում, ցորէն կալ ունեմ:
(Շարումակելի)

Արար Երևան



ՀՆԱԽՈՍՈՅՈՒԹՅՈՒՆ

ԼՈՒԱՑՈՒՄ (ABLUTION)

⇒*⇒

Սրբախօսը շուացումն բառովս կլ հասկը-
նան կրօնական այն պատուէրը, որ կը
հրամայէ լուանալ ամրող մարմինը կամ
մի մասը՝ սահմանեալ ժամու մը մէջ: Լուաց-
մամբ՝ աստուածային հրամանով կամ ա-
ւանդութեամբ կամ բնազդով մը՝ կ'իմանան
մարզիկ որ անով իրենց մեղաց թողու-
թիւն պիտի ըլլայ և հոգինին պիտի սըր-
բուի: Հին ժամանակ երբայցիք, Յոյնք,
Հովովէացիք իրենց օրէնքներուն մէջ ու-
նէին այս պատուէրը: Այժմ զեռ ևս Հնդիկը և
և Մահմէտականը կը գործածեն այս նպա-
տակով լուացումներ:

Քիմստոնէից մէջ մկրտութեան սուրբ
խորհրդոյն լուացումէն զատ կան ոտնլուայի
և այլ արարողական լուացումներ, մաս-
նաւորապէս Սուրբ Պատարազի պահուն
եղածները, որոնց կը փափազինք ակնարկ
մը տալ, հետեւելով զվարապապէս Քիմս-
տոնէական Հնախօսութեան Բառարանին
և ինչ ինչ բան յաւելլով մեր ազգային
հնաւանդ Պատարազամատոյցներէն:

Հին ատեն բրիստոնեայց սովոր էին
միծամեծ տօներու հանդիսաւորութենէ ա-
ռաջ, ինչպէս Փասիոդի կը պատմազրէ,
լուացուիլ: Այս սովորոյթս կար՝ մինչև

վերջին ժամանակներու՝ բարձր Հայոց մէջ ալ և այլուր Ազգիլուած էր այսպիսի մաքրութիւն ծոմի, պահոց, ապաշխարութեան օրերուն մէջ; Երախայը սուրբ մկրտութիւնը չընդունած նախապէս կը լուացուէին, լի. Օգոստինոս կ'ըսէ, որ երախայը այս լուացումը կը կատարէին Աւագ Հինգարթի օրը: Սովորութիւն մտեր էր Սպանիոյ մէջ, որ այս լուացումը կատարուէր Ծաղկազարդի կիրակի օրը, և կը բաւականանային գլուխնին լուալով. Նոյնը կը գըտնենք Գաղղիական եկեղեցւոյ մէջ և նոյն իսկ ի Հռովմ. բայց յետոյ ժամանակով վերցուած է: Այս ամենայն պատրաստութիւն մ'էր աւելի յարգանց և մեծարանց մատուցանելու սուրբ հանդիմաստրութեանց և մանաւանդ Անմահ պատարագին ներկայ գտնուելու և աւելի և սուրբ Հաղորդութեան Խորհրդոյն մատչելու համար: Գալով Պատարագչին՝ սուրբ Խորհրդոյն կատարողին՝ Լատին եկեղեցւոյ մէջ այժմ երեք անգամ ձեռաց լուացումն կայ. Պատարագին առաջ. Նախ քան վերաբերութիւն կամ ընծայաբերութիւն. Ճաշակմանէն վերջը սկսոյ մէջ գինիով և ջրով և չորրորդ մ'ալ՝ Բարեպաշտական սովորոյթ, եկեղեցական զգեստները մերկանալէն անմիջապէս վերջ:

Աշխամնաւուը կը զրէ թէ ի՞նչպէս ձեռաց լուացումը կը նշանակէ ևս հոգւոյ մաքրութեան սրբութիւնը: Հին էր սովորութիւնս և նոյն իսկ առարելական, թերևս զայս կը նշանակէ Պօղոս առաքելոյն առ Տիմոթէոս ըստած բառես « չհే՛ց ծծօս ըռա՛քը! », որուն ճիշտ թարգմանութիւնն է հայերէն՝ « բառնայցեն զսուրբ ձեռս », այսինքն մաքրուած և սրբուած ձեռքերը վեր վերցնեն: Հին եկեղեցիներ իրենց զարթին մէջ ունէին աղրիւր, ուր հաւատացեալը՝ պաշտամունքէն առաջ ձեռքերնին կը լուային և այնպէս եկեղեցի կը մտնէին: Տիւրոսի Պաւլինոս եպիսկոպոսը, չորրորդ զարուն սկիզբը նորակառոյց եկեղեցւոյն առջև կանգնեց աղրիւր մը, Նոյն դարուն՝ Նորայի Ա. Պաւլինոս եկեղեցւոյ գաւթիւն մէջ շնիւ տուաւ աւազան մը, որպէս զի եկեղեցի մտնողը կարենան նա-

խապէս ձեռքերնին լուանալ: Նոյնպէս կը տեսնենք Հոռովմայ Ա. Պետրոս եկեղեցւոյ հրապարակին մէջ, ուր ձեռքերնին և երեսնին կը լուանային հաւատացեալը: Ա. Յովհան Ասկրերան Բ. Կորնթացւոց թղթոյն մեկնութեան մէջ և այլուր կը յիշատակէ սոյն սովորութիւնս, և Մատթէի յորդորակներուն մէջ ալ կը յանդիմանէ զանոնը՝ որ ձեռքերնին կը լուանան, բայց հոգինին չեն մաքրեր Ներսէս Լամբրունացի իր Պատարագի Մեկնութեան մէջ կը յիշէ Հայրապետիս այս խրատականները և մերայինները կը յորդորէ ո՛չ թէ անարժան ըլլալուն եկեղեցին պէտք է հեռանալ, այլ մանաւանդ պէտք է յաճախել մաքրութեամբ հոգւոյ և մարմոյ: Եղյները եկեղեցւոյ մերձ կանգնուած աղրիւրները կը կոչեն լօսոնի կամ չօրինյ և այլն:

Արլի Ա. կեսարիոն եպիսկոպոսը կ'ըսէ. Ա. Սեղանոյն մերձեցողը կը լուանան իրենց ձեռքերը. արց կ'ընդունէին եկեղեցւոյ պաշտօնէին Ա. Հաղորդութիւնն իրենց մաքրութեամբ հոգւոյ ձեռաց մէջ, և կանայց իրենց ձեռաց վրայ ունենալով ազնիւ կսառա՝ այնպէս կը ճաշակին: Լատին ծիսարանը կը պատուիրէ քահանայից, որ պատարագէն առաջ ձեռքերնին լուանան, կ'ապսարէ նաև վերաբերումէն վերջ բանով Լուացայց որրործամբ սաղմուը և այս պատշաճութիւն ալ էր, վասն զի թողովրդեան նիւթական նուէրներն ընդունելով պէտք էր սրբել ձեռքերը՝ երկնային հացը ճաշակելու համար. բաց աստի երախայը պատարագի միջոց մինչև վերաբերում կը մնային, և ապա ձեռքերը անոնց զիլուն վրայ դնելին վերջ կը հրամայէր գուրս ելլել, և այս պատճառաւ ալ պէտք էր որ ձեռքերը մաքրէր: Կոչումն Ընծայութեան մէջ զայս կը յիշէ Ա. Կիւրեղ. Նոյնը կը գանենք Ցովհան Ասկրերանի և Մողարապեան ծիսարանին մէջ: Այժմեան լատին ծիսարանը կը հրամայէ ճաշակմանէն վերջը ձեռքի լուացում սկսոյ մէջ, հին ատեն այս լուացման ջուրը կը հեղուին աւազան, իսկ այժմ պատշաճութեան համար հրաման է քահանայից զայն ըմպէլ:

Զորբորդ զարէն յիշատակութիւն կայ, մէջ՝ Ա. Սարայի վանքի օրինապրութեանց որ յոյնց ղեռ եկեղեցի չմուած կը լուա- համեմատ՝ հաղորդուողը պարտական են ցուէին զամբին մէջ զանուած աղրիւէն, կոր կը կոչէին արդիւ աղրիւրք, քերնիօն աւագան և յետոյ ժամանակով վաձարէ յրա- ման, բայց այժմ զրեթէ վերցուած է, թէ եւ աղրիւրք զանուին իրենց սահմանուած վայրը։ Միայն արկելքի մէջ, երբ համաշ- խարհային պատերազմը և բարբարու կո- տորածները և տեղահանութիւնը չէին սկսած՝ խաղաղ և բազմահամրոյց ժողո- վուրդը՝ շատ տեղեր, մանաւանդ զիւլերու մէջ՝ այս բարեպաշտ սովորոյթը կը կատա- րէր, ինչպէս ի Նիկոմիդիա և շրջակայ զիւլերուն մէջ, Դարձեալ քահանայց վե- րաբերութեան սկիզբը (առաջօրք) կը լուա- նային ձեռքբերին։ Զորեցտասաներորդ դարուն կոստանդնուպոլիսի պատրիարքին կանոնազրութիւնը (ծատօնէց) թէն այս մասին բան մը չի յիշատակեր, բայց սրբա- խօսք կը նշանակեն զայս յատուէին, թէ քահանայից և թէ սարկաւազաց համար։ Այժմ եպիսկոպոսը կը հետևին հնութեանն և կան տեղեր ես, ուր քահանայց պատու- րազմ առաջ կը լուանան թէ ձեռքբերնին և թէ աշբերնին։

Յունաց մէջ Ճաշակմանէն յետոյ լուա- ցումը չունի առաջնոյն չափ հնութիւն, ին- ներորդ դարուն Ա. Նիկեփորոսի ընծայուած կանոնը կը հրամայէ քահանայից, որ սուրբ խորհուրդը ճաշակելէն վերջը՝ երկից լուա- ցումն ընեն՝ մին զինով և միւր ջրով։ Ենյոյն կը նշանակէ Փիլոդէոսի կանոնա- զրութիւնը, և կը պատուիրէ սարկաւազին որ երեք անզամ լուանայ սկիզբ զինով և ջրով, և սրբէ սպոնսով, և ապա իր ձեռքբերը և շրթունքները, իսկ քահանային համար լոկ կ'ըսէ լուանալ (առոնքեւու), ժողովուրդը սրբութենէն վերջը կ'ըմպէր զինի. Ռուսախոյ մէջ եկեղեցեաց մէջ կար զինով լի աման մը և սկատակա մը՝ սոյն սովորութիւնը կատարելու համար։ Կոս- տանդնուպոլիսի մէջ տաղաւար օրերուն, յորս ընդհանուր ժողովուրդը կը հաղոր- դուէր, դպրոցներու մէջ զեռ ես կը բաշխուին աշակերտաց զինի և ջուր, իսկ վանքերու

մէջ՝ Ա. Սարայի վանքի օրինապրութեանց համեմատ՝ հաղորդուողը պարտական են ցուացուելու։

Ալզի Հայ կաթողիկէ ընդհանուր սու- վորութիւն է որ պատարագիչը նախի քան զգեստաւորութիւլը, վերաբերութենէն անմի- ջապէս վերջը, ճաշակմանէն, և պատա- րագի զգեստները մերկանալէն վերջը ջրով ձեռքբերը կը լուանայ։

Այս լուացմանց մասին չգտանց ակնարկ մը ոչ Յովհ. Խմաստասէր Հայրապետին և ոչ Խոսրով Անձնացւոյն տպազիր գրուա- ծոց մէջ։ Ներսէ Լամբրոնացի կը լոէ քահանայից նկատմամբ պատարագին ըս- կիզը լուացման մասին, եպիսկոպոսին համար (Տպ. Ա. Ղազար Էջ 195) կ'ըսէ։ «..իսկ եթէ եպիսկոպոս լինի խորհրդա- ւ ծովն, առնու զսուրը կոնքենն, ածեալ « ի վերայ լանջացն և զպատուական՝ իմի- « փորոնն և զայ առընթեր ընծայարանի « սեղանոյն՝ բուացեայ զձենս և մատուցեալ « անկանի առաջի սեղանոյն ի վերայ երե- « սաց իւրոց լուռ և անմոռոնչ սաէց զաղօթս « զայ առ Ա. Հոգին. Ամենակալ Աստուած»։ Վերաբերութենէն վերջը կատարուած լուա- ցումին համար կ'ըսէ (նոյն Էջ 212) «Եւ « կատարի խորհրդաւոր արօթքս.. և կիսա- « սարկաւազն ջուր բերեալ քահանային « լուանալ զձեռս առաջի սրբոյ սեղանոյն»։ Հայրապետու՝ զլիակարգութեան ներքէ։ «Զինչ յետ այսորիկ լուանալ զձեռն ա- ռաջի սրբոյ սեղանոյն ազդէ խորհուրդի ի Փինուեսիուէ» կ'ըսէ. սարկաւազները սուրբ սեղան վերաբերելէն և արօթքը լմնալէն վերջը, ապա սուրբ սեղանոյն առջև քա- հանայապետը կը լուանայ իր ձեռքը հան- դիրձ պարկէն կարգօքն քահանայից։ Հոս կը զնէ, որ քահանայց ի միասին կը լուանան ձեռքբերնին քահանայապետին հետ։ Կը յիշեցնէ Հայրապետս յունական արարուութիւնն, որ պատարագչին հետ ներկայ քահանայց ալ կ'ընկերանային և հետևաբար անոր հետ ամէն ծիսական կանոնադրութիւններն ալ պարտական էին մէկտեղ կատարելու։ Հաւանական է որ Լուսաւորչայ ժամանակ՝ յունական ազ-

դեցութեանց ներքե գտնուուղ հայր ևս այս սովորութիւնս կը պահէին և գուցէ լամբրունացւոյն խօսքերը զայս կը յիշեցնեն։ Հայրապետս կը լոէ՛ ի մեր տպազրին՝ սկսոյ մէջ վերջին ցօղման և լուացման մասին։ Բայց « Արքազան Պատարազամատոցի Հայոց » բազմահուու հեղինակը (Էջ 554) կը զնեն « Լուանայ քահանայն » և զձեռս, սարկաւագն՝ մինչ նորա պաշտեն՝ « խունկ արկանէ ջուրջ զսեղանտվի » իւ « առեալ զսպասն տանի ի սարկաւագաւ « տուն » :

Վանացս Գրադարանին ձեռագիրը 1145, կը պարունակէ խորհրդատեսրեր։ Ասացին, որ է պատարազամատոյց Ս. Աթանափի (ընդորինակութիւն Փարիզու գրչագիւն), կարմրադեղով կը նշանակէ խրատագրոյն մէջ։ « Խսկ եթէ եպիսկոպոս լինի « խորհրդածուն առուու զսուրք կոնքնենն.. ։ « և զայ առընթեր ընծայարան սեղանոյն « լուացեալ զձեռս ». Վերարերութենէն վերջ լուացման համար կը զրէ։ « Քրեն « ջուրն և լուանայ քահանայն, զծայրս « մատանցն, որպէս ասէ սուրբն Դիմինե « միոս ». Երրորդ լուացման մասին կը յաւելու « Եւ կէս սարկաւագն բերէ ջուր « լուանալ զձեռս քահանային » :

Երկրորդ պատարազամատոյցը, որ է « Պատարազ սուրբ հօրն մերը Գրիգորի « Լուսաւորչին » չունի լուացման մասին ակնարկ մը։ Երրորդ պատարազամատոյցը, որ է « Պատարազ... սրբոյն Բարսղի »։ Կը յիշէ երկրորդ լուացումը երախայից եկեղեցին դուրս ելլիէն վերջ այսպէս։ « արժանաւորը մնան ի ներքս և կատա « բն զսուրք խորհուրդն, իսկ քահանայն « լուանայ զձեռսն և կայ առաջի սրբը « սեղանոյն » :

Գրիգոր աստուածաբանի, Ս. Սահակայ և Կիւրդի ընծայուած պատարազամատոյցները կը լուն, Ս. Թակորայ՝ Տեառնեղոր

Պատարազին մէջ՝ Հաւատամցէն վերջը կը զնէ. « Եւ քահանայ զգուշութեամբ « լուանայ զձեռս իւր առաջի սրբոյ սե « զանոյն և խոստվանի զմեզս իւր »։ Երրորդ լուացման նկատմամբ խրատազիրը կարմրադեղով կ'ակնարկէ։ « նոյնպէս և « այլ խորհրդածութիւնքն կատարին որպէս « և յայլսն » :

Նոյն ձեռագիրն ունի. « Պատարազ աւ « սացեալ սուրբ հօրն մերոյ իգնատիսի « աստուածազգեաց հայրապետի », ուր կարմրադեղ խրատազիրը կը զնէ. « Զինի « պաշտամանց և ընթերցմանց մարգա « բէսական և առարելական հրամանացն և « սուրբ աւետարանին և սուրբ հաւատոցն « և բարողութեան սարկաւագին և բերելոյ « զընծային ի սուրբ սեղանն՝ քահանայն « լուանայ զծայրս մատանցն » :

Վերջին խորհրդատեսրն է զլիսակարգով։ « Պատարազամատոյց Աստուծով որով « կատարի խորհուրդն յամենայն օր, զի « այս միայն է և ոչ զոյ Հոռմայեցոցն « խորհուրդ պատարազի »։ արդ ասոր մէջ ամենակին ակնարկութիւն մը չ'ըներ խրատազիրը լուացմանց համար :

Գրչագիրս կը կնքէ իր վերջաբանով՝ խորհրդատեսրերու մասին տալով տեղեկութիւններս. « Աստամօր կամօր և խնա « մօց ամենազօրին Աստուծոյ, յանկ ելեալ « սուրբ մատեանս պատարազամատոցի, « որ ունի յինքն բովանդակեալ զաղօթն « սուրբ քահանայն պահուցից Աստուծոյ, զոր « յիւրաքանչիւր ժամանակս արարեալ են « խորհուրդ պատարազի Արդ եղեւ աս զրեալ « ձեռամբ.» քահանայի նիկողայոսի. ի « թուականին Հայոց Զիգ. ի զրեակս « Անարզարա. ի թազաւորութեանն Աւշնի « և ի քահանայապետութեանն Տեառն կոս « տանգեայ և ի մերոյ եկեղեցւոյս յառաջ « նորդութեան Տեառն մերոյ Յոհաննիսի « եպիսկոպոսի ...» :

